Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

16680

361.
Ն-93

1879

# ՀԱՇԻՒ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ՎԱՍՆ 1878 ԱՄԻ.

ՌՈՍՏՈՎ, (Դօնի վերայ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1879 — ՌՅԻԹ.

2010

361
Ն-93

361
Ն-93

# ՀԱՇԻՒ

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ

## ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

## ՎԱՍՆ 1878 ԱՄԻ.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 18 Сентября 1879 года.

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1879—ԹՎԻՆ.

2002

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 18 Сентября 1879 года.

5000 б-ан

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

35940-66

# ՀԱՇԻՒ

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ՀԱՅՈՑ

### Նոր-Նախիջևանի քաղ. 1878 ամ.

Խորհրդարան Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջևանի պատիւ ունի այսօր համաձայն ԺԷ. յօդուածոյ կանոնադրութեան ընկերութեանն առաջի առնել ընդհանուր ժողովոյ անդամոց նորին անցեալ 1878 ամի ընկերութեան ունեցած մուտքն ու ելքը:

Ինչպէս կերևի ընկերութեան հաշուեմատենէն՝ առ մին յունվարի 1878 ամի ընկերութեան ունեցած դրամագլուխն էր.

| | Րուբ. | Կոպ. |
|---|---|---|
| ա. Տասն տոմսակք Ա. ներքին փոխառութեան . . . . . . | 2,000 | — |
| բ. Երկու տոմսակք Բ. ներքին փոխառութեան . . . . . . | 400 | — |

| | | |
|---|---|---|
| դ. Ութն բանքական տոմսակք . | 800 | — |
| ե. Քսանեւից տոմսակք Ա. արեւելեան փոխառութեան . . . . | 2,600 | — |
| զ. Առնելիք ի վանական կառավարութենէ . . . . . . | 188 | — |
| է. Առնելիք ի զանազան անձանց . | 517 | — |
| ը. Առնելիք ի ստորագրութենէ նուիրատուաց . . . . . . | 1,580 | — |
| թ. Պատրաստի գումար դրամոց . | 2,136 | 37 |
| Գումարն. | 9,221 | 37 |

1878 Ի. Ընկերութիւնն ունեցել է ծախս.

| | | |
|---|---|---|
| ա. Տոկոսիք տասներկու տոմսակաց Ա. և Բ. ներքին փոխառութեան . . | 60 | — |
| բ. Տոկոսիք ութն բանքական տոմսակաց . . . . . . . | 40 | — |
| գ. Տոկոսիք քսանեւից տոմսակաց Ա. Արեւելեան փոխառութեան . | 127 | 50 |
| դ. Հաշուարկութիւն յընթացական հաշուէն և ի պատրաստական դրամագլխոյն ձեռամբ պ. Սարգսի Բխտեան և Վարդերեսի Ախշեան . . | 244 | 97 |



| | | |
|---|---|---|
| ե. Նուէր ի պ. Նիկողայոսէ Սալամբէգեան . . . . . . . | 25 | — |
| զ. Նուէր ի պ. Պօղոսէ Կարապետեան . . . . . . . . | 10 | — |
| է. Ի թոշակաւոր աշակերտաց . | 275 | — |
| ը. Տարեկան բաժանորդագինք ի հարիւր եօթանասուներկու անդամոց . . . . . . . . . | 1,302 | — |
| թ. Ի պ. Յովակիմայ Վարթանէսեան Ալաճալեանց վասն պահպանելոյ մշտնջենաւոր անդամութեան կոչումն . . . . | 120 | — |
| ժ. Ի Մահտեսի Հեղինէ Գաբրիէլեան Պօպօմայէ վասն պահպանելոյ մշտնջենաւոր անդամութեան կոչումն . . . . . . . . | 120 | — |
| ժա. Ի Տիկին Վարդուհի Պօպօմայէ տոկոսիք երեք հարիւր րուբլի դրամոց տուեալ նմա ի շահեցողութիւն . | 30 | — |
| Ընդ ամենն մտից գումարն. | 2,084 | 47 |
| Որ անցեալ 1877 ամի յաւելուածովն լինի ընդ ամենն . . . | 11305 | 78 |

Իսկ 1878 տարւոյ մէջ ընկերութեան ունեցած ծախքն է.

Ա. Ծախք Ժառանգաւորաց դպրոցին Սրբոյ Խաչի վանուց Նոր-Նախիջեւանի, այն է.

| | | |
|---|---|---|
| 1 Ռոճիկք վանահօր, ուսուցչաց և վերակացուի . . . . . . . | 1,060 | 15 |
| 2 Ռոճիկք գիշերապահի և լուացարարի . . . . . . . . . . | 117 | — |
| 3 Զանգերձեղինաց և կօշկաց աշակերտաց . . . . . . . . | 154 | 7 |
| 4 Տնտեսական պիտոյից աշակերտաց | 106 | 3 |
| 5 Անդադրամ տուեալ վանական կառավարութեան վասն թոշակաւոր աշակերտաց . . . . . . . | 210 | — |
| 6 Վասն պահպանութեան տոմսակացն ի դրամատան . . . . . . | 5 | 95 |
| 7 Վասն միոյ պահարանի ի թանկարանին . . . . . . . | 16 | — |
| 8 Գրենոյ և այլ ուսումնական պիտոյից . . . . . . . . . . | 90 | 28 |
| Բ. Ծախք խորհրդարանի Մարդասիրական ընկերութեան . . . | 82 | 22 |

Ընդ ամենայն ծախուց գումարն է 1,841 ր. 70 կ.



Այս առաջարկուած հաշուէն կտեսնուի որ Մարդասիրական ընկերութիւնը 1878 տարւոյ մէջ մուտք ունեցել է երկու հազար ութսուն եւ չորս րուբ. քառասուն եւ եօթը կ. (2084 ր. 47 կ.) իսկ ծախք հազար ութ հարիւր քառասուն եւ մի ր. եօթանասուն կ. (1841 ր. 70 կ.), որ տարեկան ծախքը մուտքէն հանելով՝ կմնայ յաւելեալ գումար երկու հարիւր քառասուն երկու րուբ. եօթանասուն եօթը կոպէկ (242 ր. 77 կ.)։

Խորհրդարանս պատիւ ունի նոյնպէս յայտնել մեծարգոյ անդամոցդ, որ անցեալ տարւոյ ունեցած զանազան առնելեաց գումարէն այս տարւոյ մէջ ստացաւ հինգ հարիւր տասնեւութ (518) րուբլի. նոյնպէս նուիրատուաց գումարէն ստացաւ չորս հարիւր վաթսուն (460) րուբ. որով ընկերութեան ունեցած դրամագլուխն աւելցաւ:

Ուստի ի վերջ 1878 ամին, կամ ի սկզբան ներկայ տարւոյս ընկերութեան ունեցած դրամագլուխն կլինի . . . . . . . . 9464 ր. 14 կ., որ կբաղկացնեն հետեւեալք.

ա. Տասն տոմսակք Ա. ներքին փոխառութեան ընդ համարօք 16,029, 16,030, 16,031, № 38 և 17,080, 17,099, 17,100, 17,101, 17,102, 17,103, 17,104, № 39. է գումար . 2000 —

| | | |
|---|---|---|
| Դ. Երկու տոմսակ Ա. ներքին փոխառութեան ընդ համարօք 12,081, № 56 և 15,922, № 22 ի գումար. | 400 | — |
| Ե. Ութ բանքական տոմսակք ի գումար . . . . . . . . . | 800 | — |
| Զ. Քսանևվեց տոմսակք Ա. արևելեան փոխառութեան ի գումար . | 2,600 | — |
| Է. Մի տոմսակ Բ. արևելեան փոխառութեան ի գումար . . . | 100 | — |
| Ը. Ստանալիք յերից անձանց . | 187 | — |
| Թ. Ստանալիք ի ստորագրութենէ նուիրատուաց . . . . . . | 1,120 | — |
| Գումարն լինի . . | 9,464 | 14 |

Նախագահ Խորհրդարանի Ն. Պողոսեան.

Գանձապահ Մ. ընկ. Սարգիս Տր. Ոսկերչեան.

ԱՆԴԱՄՔ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՔ ԺԱՌԱՆԳ. ԴՊՐՈՑԻՆ.

Յովհաննէս Տէր-Աբրահամեան.
Խաչատուր Ստեփանոսեան.
Ստեփանոս Պոպով.
Յովհաննէս Չայլախեան.
Միքայէլ Չոռըխեան.
Վարդերես Եփչեան.
Պօղոս Սալթիքեան.
Գաբրիէլ Արապեան.
Պետրոս Քէչէջեան.

## ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ընդհանուր ժողովոյ Մարդասիրական Ընկերութեան Հայոց

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ.

Յերեք յուլիսի 1879 ամի. Մեք ի ներքոյ ստորագրեալ անդամք ընդհանուր ժողովոյ Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նորոյն Նախիջևանի, ժողովեալ ընդ նախագահութեամբ ի սմին ժողովոյ ընտրեալ Խաչատուր աւագ քահանայի Զարիֆեան, վերահասու եղաք ընդ ձեռն մեօք ընտրեալ յանձնաժողովոյ ի Պ. Յովհաննու Քէլլէ-Շահինեանց և Վարդերեսի Արմաքէշեանց մտից և ելից գումարաց ընկերութեանս և ժառանգաւորաց դպրոցի Սրբոյ Խաչի վանուց վասն անցեալ 1878 ամին և գտաք.

Ա. Որ հաշուեմատեանները ի գործ դրուած են ըստ կարգի.

Բ. Ընկերութիւնս ընդհանուր մուտք ունեցել է նոյն տարւոյ մէջ 11,305 ր. 78 կ. իսկ ծախք 1841 ր. 70 կ., որ և հանեալ ի մուտից գումարէն մնայ առ Գանձապահըն առ 1 յունվարի 1879 տարւոյն՝ ինն հազար չորս հարիւր վաթսուն չորս րուբ. տասն չորս կոպ. արծ. (9464 ր. 14 կ.)
Գ. Այս գումարը կբաղկացնէն 12 տոմսակ Ա և Բ ներքին փոխառութեան 2400 ր., 8 բանքական տոմսակք—800 ր., 26 տոմսակք Ա արևելեան փոխառութեան 2600 ր. և 1 տոմսակ Բ արևելեան փոխառութեան—100 ր.

Առնելիք ի զանազան անձանց և ինստիտուտաց 1307 ր. և պատրաստի գումար դրամոց—2257 ր. 14 կ.—ընդ ամենայն 9464 ր. 14 կ.: Կարգադրեցաք. Խոր-



հրդարանէն առաջարկուած հաշիւներն ընդունել և ծախքերը հաստատել և առաջարկել խորհրդարանին, որ ընկերութեան դրամագլուխը և գոյացած արդիւնքները գործադրէ նաև 1879 տարւոյս մէջ համաձայն կանոնադրութեանն, խորշելով, որչափ կարելի է աւելորդ ծախքերէ. և առաջարկուած հաշիւը 1878 ամին տալ ի տպագրութիւն վասն ընդհանուր տեղեկութեան: Առաջարկել նաև խորհրդարանին որ եղած առնելիքները յընթացս ներկայ 1879 թուականին ժողովուի և ըստ կարելոյն ապառիկ չթողցուի:

Ի վերայ իսկականին ստորագրեալ են նախագահ ժողովոյն և անդամք երեսուն և ինն :

Ընդ իսկականին համեմատ է

ՍԱՐԳԻՍ. ՔՀ. ՈՍԿԵՐՉԵԱՆ.

## Գ. ՆԱԽԱԳԱՀԻ ՃԱՌԸ.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՏԵԱՐՔ,

Այս տասնեւմեկերորդ տարին է ահա, որ ընկերութեան խորհրդարանը պատիւ ունի իւր գործունէութեան հաշիւը ներկայացնել ընդհանուր ժողովոյ Գ. Ընդամոցդ, որ և զննելով Դուք, Մեծապատիւ Տեարք, կտեսնէք, որ անցեալ 1878 թ. ևս խորհրդարանը աշխատած է ըստ կարի ջերմեռանդութեամբ կատարել Ընկերութեանս գործերը կառավարելով, և իւր խնամոց յանձնուած Ս. Խաչ վանքիս Փառանգաւորաց դպրոցի ուսումնական մասին պիտոյքը հոգալով:

Վերջին ժամանակներս սոյն Փառանգաւորաց դպրոցի ունեցած քանի մի թերութեանց պատճառաւ, սխալ գաղափարներ տարածուած է ընկերութեանս անդամոց ոմանց մէջ, որ իբր սա կարողացած չէ իրմէ սպասելիք պտուղները ցուցընել և իւր նպատակին ծառայել. ուստի բարւոք կկարծեն նոքա Ընկերութեան գործունէութեան շրջանը փոխելով՝ դրամագլուխը մի այլ նպատակի գործադրել:

Ահա սոյն առթիւ, Մեծապատիւ Տեարք, ինձ նուիրական պարտականութիւն կհամարեմ քանի մի խօսք աւել ներկայ Ժողովոյս մէջ. որպէս զի Դուք գոնէ համառօտապէս իմանալով՝ ընկերութեանս ի սկզբանէ անտի, այսինքն իւր հաստատութենէն մինչև ցայժմ, ունեցած մուտքն ու ծախքը, և ի նկատի ունենալով նոյնպէս թէ Ընկերութեան խնամօք տասն տարուան միջոցին, քանի՞ և ո՞րքան որբոց և չքաւոր մանկանց հասուցած է օժանդակութիւն,—կարող լինիք դատել թէ ո՞րքան արժէք ունին այնպիսեաց կարծիքը:

Գիտեմ, որ կան նաև այնպիսիք, որ չունենալով կատարեալ տեղեկութիւն ընկերութեան տասնամեայ գործողութեանը և Ժառանգաւորաց դպրոցի ցոյց տուած բազմակողմանի արդեանցը, վայր ի վերոյ զրոյցներէ դրդուած՝ կարող են վրդովել, որով պաղիլ ընկերութեան բարենպատակ գործողութենէն և նորա ազգաշահ ձեռնարկութենէն:

Արդէն Ձեզ յայտնի է, Տեարք, թէ մեր այս ընկերութիւնը քանի մի անմեղ մանկանց մատաղ սրտերու արգասեաց պտուղն է, որք իւրեանց մանկութեան թարմ ուժերովը ի չգոյէ, և գրեթէ յանհնարից հնարաւորելով այս գործը, սկսած էին միաբան աշխատութեամբ իրենց հայրենակցաց՝ իրենց



արենակից որբերուն և անտէրունչ հասակակիցներուն վրայ խնամք տանելոյ նպատակաւ:

Բարեսէր ազգայինք տեսնելով նոցա մատաղ հասակի մէջ ցոյց տուած, նոյն սիրովը վառուած, մասնակցեցան նոցա ձեռնարկութեանը. և ընկերութիւնս կազմուեցաւ, որ և 1867 թուին միայն 4000 ր. դրամագլուխ ունենալով՝ Վեհափառ Հայրապետին հզօր պաշտպանութեանը դիմեց. և նորա Օրհնութեամբ և հաստատութեամբ քաջալերուած՝ մէկդի դրեց ամենայն երկիւղ և վհատութիւն և իսկոյն ձեռք զարկեց սոյն Ժառանգաւորաց դպրոցի բացմանը, որպէս զի կարողանայ անով ենթադրեալ նպատակին հասնիլ, անտէրունչ որբոց և աղքատ տղայոց վերայ խնամք տանիլ, հոգալով միանգամայն և նոցա որպէս մարմնական, նոյնպէս և հոգեկան պիտոյքը. և անով քանի մի մանուկներ աղքատութեան մէջ ունենալիք փորձանքներէն ազատիլ, ու նոցա ըստ կարի հայ հասարակութեան անդամներ պատրաստել:

Ընկերութեանս հաստատութեան և Ժառանգաւորաց դպրոցի բացման սկիզբը՝ Ընկերութեան կարողութիւնը սակաւ լինելով, շատ փոքր էր դպրոցի շրջանը. այլ Դուք, Տեարք, տեսնելով գործոյն օգտակարութիւնը, ինքներդ Ձեզնէ համոզուած՝ եկաք մտաք սոյն բարենպատակ գործոց մէջ, չխնայեցիք

Ձեր դրամը, Ձեր աշխատութիւնը. և կարողացաք սակաւ առ սակաւ շատցնել նորա մէջ պատսպարուած որբոց թիւը, ընդարձակել նորա ուսման շրջանը և այնչափ բարեկարգել, որ նոյն դպրոցը քիչ ժամանակի մէջ առանձին համբաւ ստանալով, շատերը ցանկացան և աշակերտութեան տալ իւրեանց որդիքը նաև թոշակով: Եւ ինչպէս հոգաբարձուաց մատեաններէն կերևի, 10 տարուան միջոցին բազմաթիւ թոշակաւոր աշակերտներ ուսման վարձ հատուցած են մինչև 10,047 ր.

Դպրոցի օգտակարութեան ու բարի համբաւոյն յայտնի ապացոյց է նաև այս, որ իւր 10 տարուան ընթացքում (4000 ր. դրամագլխով սկսած), կարողացած է իւր արդիւնքներէն ծախսել դպրոցի ուսումնական մասին, և աշակերտաց հագուստի համար 17,902 ր. որպէս նաև դպրոցի նորոգութեան համար 2270 ր., ուրեմն մինչև 20,000 ր. և ունեցած վեց հազար կորուստէն զատ՝ ներկայ տարուան սկիզբը ունի նաև յաւելեալ դրամագլուխ մինչև 9,500 րուբլի:

Արդեօք Ընկերութեան բարի նպատակին և Ժառանգաւորաց դպրոցին օգտակարութեան պտուղները չե՞ն Շալթեանի, Ռափայէլ և Գասպար Պօպովների աւանդած և ստացուած գումարները,



կամ այժմէն կտակուած և տակաւին չստացուածները:

Ինչպէս յայտնի է Խորհրդարանի գործերէն՝ 1869 թուէն մինչև ներկայ թիւս Ժառանգաւորաց դպրոցը մտած են 120 աշակերտք, 78 ի հասարակութենէ քաղաքիս, որոց մեծի մասին որբ և անտէր մանկունք, 9 որդիք չքաւոր հոգևորականաց, 16 հինգ շրջակայ գեղերէն և 17 վանքի ագարակէն: Այս թուէն ներկայս են դպրոցին մէջ 22 աշակերտք: Դպրոցի ուսման ընթացքը աւարտած են 17, որոց երկուքը կծառայեն եկեղեցւոյն, մէկը մտած է ուղղակի և կշարունակէ իւր ուսումնը Թէոդոսիոյ Վարժապետանոցին մէջ, երկուքը կշարունակեն ուսումն Լազարեան Ճեմարանին մէջ՝ ուղղակի երրորդ դասարան մտնելով, 4-ը Ս. Էջմիածնի Ճեմարանին մէջ են, պատիւ բերելով մեր Դպրոցին իւրենց սկզբնական պատրաստութեամբը. միւսներէն ոմանք կշարունակեն ուսանիլ այլ և այլ ուսումնարանաց մէջ, իրենց ծնողաց և բարերարաց շնորհիւ, և ոմանք կպարապին զանազան գործերով. և որչափ ինձ յայտնի է, չեմ ամաչիր ասել, մեծարգոյ Տեարք, որ նոքա ևս դարձեալ բաւական զարգացած են կրթութեամբ, և իրենց բարեբարոյ, համեստ և քաղաքավարի ընթացիւքը պատիւ կբերեն դպրոցին



ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

և Ընկերութեանս։ Եւ այս կասեմ ոչ միայն խօսքով, այլ կարող եմ մատով հաշուել, և Ձեզ ցոյց տալ։

Այս բաներուս վրայ Ձեր ուշադրութիւնը դարձնելով, ներեցէք Տեարք, իմ վստահութեան, որ կհամարձակիմ հարցնել, արդեօք անօգո՞ւտ է դպրոցս, և կրնա՞յ ապարդիւն համարուիլ ընկերութեանս նորա համար արած ծախքը, և նոյն իսկ իւր նպատակը, ինչպէս կուզեն երևցընել ոմանք. և դարձեալ կարելի՞ էր վերը յիշուած չնչին գումարովը յընթացս այսքան կարճ միջոցի ցուցուցածէն աւելի արդիւնք պահանջել։

Այս ասելովս ես չեմ ուզեր հաւատացնել Ձեզ թէ ընկերութեանս հօգաբարձուաց գործունէութիւնը բոլորովին անսխալական է, կամ Ժառանգաւորաց դպրոցը ըստ ամենայնի անթերի է, և կամ պէտք չունի այլ ևս բարեկարգութեան։ —Ո՛չ, քաւ լիցի. մեք միշտ ունեցել եմք մեր պակասութիւնը։ Դպրոցը կարօտ է բարեկարգութեան. նա աւելի ջերմեռանդ հոգատարութեան պէտք ունի, իւր ներքին կազմակերպութեան բարւոքման նկատմամբ. բայց Ձեզ ևս յայտնի է, որ միայն ցանկանալով՝ իսկոյն չեն լինիր այդ ամենը, կան շատ բաներ որ ժամանակի և առաւել արթուն կառավարչաց գործունէութեան կարօտ են։



Եթէ դպրոցը ունի պակասութիւններ, եթէ ընկերութիւնը իւր նպատակին չհասած կկարծուի, եկէք, եղբարք, փոխանակ դանդաղելոյ՝ հոգ տանենք նորա բարւոքելուն, որ այսուհետև աւելի դիւրին պէտք է լինի անշուշտ, քանի որ, ողորմութեամբն Աստուծոյ, Ընկերութեանս միջոցները հետզհետէ աւելանալոյ վրայ են, և վանական կառավարութիւնը ևս, շնորհիւ մեր ազգասէր Վեհափառ Հայրապետին, խնայած չէ իւր ձեռնտուութիւնը՝ դպրոցին տնտեսական պիտոյքը հոգալով, որ մի ժամանակ անտանելի բեռն էր դարձած մեր Խորհրդարանի հոգաբարձուաց վերայ։

Ժառանգաւորաց դպրոցի դրութիւնը ապահովված է այժմ նիւթապէս, որովհետև ընկերութիւնս կը հոգայ նորա ուսումնական մասը, իսկ վանքը կըմատակարարէ սնունդը, հարկ կայ ուրեմն միայն դպրոցի ներքին կառավարութիւնը բարւոքել և անոր թերութիւնները ուղղել, որ առաւելապէս դըպրոցի տեսչութենէն ունի կախումն, և եթէ այս յաջողապէս կատարուի, այն ժամանակ դպրոցը հասած կլինի իւր նպատակին, որ ոչ սակաւ փառք և պարծանք կլինի ինչպէս մեր Ընկերութեան և նորա քրտնաջան աշխատաւորաց. նոյնպէս և առաւել մխիթարութիւն պիտի պատճառէ ուսումնատենչ Վե-

հաւատ Հայրապետի սրտին, որ հաճեցաւ իւր հզօր հովանաւորութեան տակ առնուլ մեր եղբայրութիւնը, և մինչև ցարդ իւր խնամքը երբէք պակասեցուցած չէ մեզնէ։

Երբ այս ամեն բաները ըստ կարողութեանս Ձեզի յայտնելով, Մեծարգոյ Տեարք, Դուք տեսաք որ դպրոցը 10 տարուան ընթացքում իւր կարողութենէն գրեթէ աւելի արդիւնք տուած է, Դուք տեսաք, որ Խորհրդարանիս և ամենայն անդամոց ջանիւք ընկերութեանս արդիւնքը աւելացած է և ոչ պակասած, (մանաւանդ երկու տարի առաջ պատահած կորուստէն վերջը)։ Տեսաք նոյնպէս որ վանքի վարչութիւնը իւր ձեռքէն եկած միջոցները խնայած չէ դպրոցի սննդեան մասը բարեկարգելոյ և դպրոցը ամենայն կողմանէ նիւթականապէս ապահովուած է։ Ուրեմն ի՞նչ հարկաւորութիւն կայ ընկերութեան գործունէութեան նպատակը փոխել, և Ժառանգաւորաց դպրոցէն ձեռք վերցնել։

Ամենայն թերութիւն կարելի կլինի հեռացնել եթէ Ձեր հաստատ կամքը լինի։ Եթէ Դուք կարողացաք կազմել Ընկերութիւն և ի չգոյէ գոյացնել այդքան գումար, որով և ստեղծել այդ դպրոցը, միթէ այսուհետև, որ առաւել ունիք միջոց և հնար



պիտի չկարողանամք բարւոքել նորա դրութիւնը և պիտի վհատի՞ք։ Եթէ Դուք, որ կարողացաք ընկերութեան ունեցած մեծ և զգալի վնասը ծածկել և ընկերութեան կրկին վերակենդանութիւն տալ, միթէ այժմու թեթև թերութիւնները պիտի չկարենամք ուղղել։

Տարակոյս չկայ որ այդ ամենն հնարաւոր կլինի Ձեզ, եթէ աւելի քաղցր ակնածութիւն ունենաք գործոյն վերայ։ Աղաչեմ Ձեզ, ուշադրութիւն դարձուցէք, ո՛ Տեարք, իմ ասած բաներուս, միաբանեցէք սիրով ի յօդ միութեան, աշխատեցէք դպրոցի վերանորոգութեան համար պէտք եղած միջոցները գործադրել. փոյթ ունեցէք նորա բարեկարգութեանը, հանեցէք նորա միջէն, եթէ կան, որ և իցէ արգելքներ և խոչընդոտներ, որք կըսպառնան նմա կործանումն։ Բայց ոչ մէկ բան կարող չէ այնքան սպառնալ դպրոցի և Ընկերութեան նպատակին, որչափ Ձեր սրտի ցրտութիւնը առ Ընկերութիւնը և առ Ժառանգաւորաց դպրոցը։

Եթէ Ձեր սիրտը տաք լինի դպրոցին վերայ, ամենայն վնասակար ամենայն արգելառիթ պատճառ, կարող է ի նմանէ հեռանալ, իսկ եթէ Ընկերութեանս հակառակ Ձեր սիրտը ցրտացած մնայ, գլխցած եղիք որ մի վայրկենի մէջ կարող է քան-

դուրլ և ոչնչանալ մեր տասնամեայ տարած տաժանակիր աշխատութիւնը:

Եւ դպրոցիս փակուիլը, տէր մի՛ արասցէ, որքան անպատուութիւն պիտի լինի մեզ յէջս պատմութեան իննևտասաներորդ լուսաւոր դարուս:

Ափսո՜ս մեզ, մինչդեռ դրսէն զանազան անձինք ներէ քաջալերութիւններ և դպրոցին օգնութեան աւետիքներ կհասնեն, աստ ի ներքուստ նորա փակուիլը կլսուին: Օտարները սորանով կխրախուսուին և իւրեանց օրինակ կառնուն մեր Ընկերութեան գործունէութիւնը, այստեղ՝ Դպրոցիս սեպհական կառավարիչք (չգիտեմ ինչ աղբիւրէ առած) սորա անօգուտ լինելը կքարոզեն: Արբաղան անձինք, և բարձրը ուսումնականք, քանի՛ և ո՛րքան Դպրոցիս շահաւոր և ազգիս պիտանացու լինելը փաստերով կհաստատեն, այլ մեր ընկերք ոմանք, որոց պարտքն էր սորա ապահովութեան և հաստատութեան ջանալ, „ապարդիւն“ է ասելով բարեմտաց սիրտը կը պղտորեն: Աւելի բարձր գաղափարի տէր անձինք սորա ազգիս մեծ օգտակար լինելը ապացուցում, վասնզի մէջ գտնուելովս իսկ ճանաչած են հեռատեսութեամբ. Իսկ մեք, որ նոյն մտօք բացած եմք այդ դպրոցը, և արդէն քիչ ու շատ օգուտը տեսած եմք մեր աչօքը, այժմ իբրև մեր արածին ինքնիս չհաւանելով սորա տեղափոխութեանը կը նկատիմք:



Ո՛չ, Մեծարգոյ Տեարք, կխաբուինք մեք այդ նոր գաղափարով, կվնասենք մեր Ընկերութեանը այդ թիւր դիտաւորութեամբ, քանզի ինչպէս հաստակաց առածը կասէ, ամենայն քար իւր տեղը ծանր է, նոյնպէս մեր դպրոցը, որ եթէ հաստատ է, վանքի՛ն մէջն է հաստատ, իսկ եթէ տեղափոխեմք, ըստ ոմանց ցանկութեան, գիտցած եղիք, որ սա իւր յարատեւութիւնը կը կորսընցնէ, այնտեղ աւելի խաչընդոտներու կպատահի, և աւելի խաղալիք կդառնայ, որ մի ըստ միոջէ ասելը ինձ չի յարմարիր, այլ մեք և դուք փորձով տեսած եմք, և մտքով կհասկանամք:

Ահա այս բաները Ձեզ իմ կարողութեանս չափ ասելով՝ կյուսամ, որ քիչ ու շատ կարողացայ Ձեզ իմ միտքս բացատրել, և կվստահանամ Ձեր վերայ, որ համոզուած էք արժէք չտալ այն օտարոտի խորհուրդներուն. և քաղցր ակնածութիւն ունենալով մեր ազգաշահ նպատակին վերայ, կաշխատիք սորա յարատեւութեանը, ապահովութեանը և բարօրութեանը:

Կփութամ Ձեզ յայտնել նաև իբրև խրախոյս և քաջալերութիւն, որ ի ներկայս, քանի մի ազգասէր անձինք դրամական կտակաւանդութիւններ արած են յօգուտ Ընկերութեանս և Ժառանգաւո-

լաց դպրոցին, այն է Ստեփանն Նալթալեանց կտակած է 2000 ր., որ յետ մահուան կնոջն պիտի ստացուի. այլ ի Աննայն Ալաճալեանց աւանդած է 4,800ր. և դրամը արքունի բիլէթներով կը պահպանուի քաղաքիս դրամատանը, և ի մօտ օրերս ի Սլավեանոսերբսկ քաղաքի մէջ վախճանելով մեր՝ Նախիջևանու քաղաքացի Միքայէլ Գէորգեան Խարայեանն՝ նոյնպէս կտակած է մի հազար րուբլի, որոյ արդիւնքով պիտի պահպանուի մէկ սան վանքիս դպրոցին մէջ. կան նաև քանի մի մանր գումարներ կտակուած, որ ինձ մի ըստ միոջէ այժմ յայտնելը կանուխ է։

Ի վերջ բանիս խոնարհ ակնածութեամբ պատիւ ունիմ յայտնել ժողովոյ անդամոց, որ ընկերութեանս հաստատութեան օրէն սկսած գրեթէ շարունակաբար կատարած եմ մեր խորհրդարանի նախագահութեան պաշտօնը, զոր տանել այլ ևս չկարենալով՝ կխընդրեմ Ձեզ արձակել ինձ այդ պաշտօնէն, մանաւանդ որ այդ երկարամեայ ծառայութիւնս ոչ սակաւ պատճառ կուտայ ոմանց անտեղի գրպարտութիւններով նուաստացընել իմ աշխատութիւնները, հեռաւոր՝ և ընկերութեանս գործոյը տեղեակ չեղող մարդոց առջև։

ԵԳԻՓԱՆ ՊՈԳՈՍԵԱՆՑ.

# ԱՆՈՒԱՆՔ

## ԱՆԴԱՄՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

---

### Մշտնջենաւորք

1 Ալաճալեան Ակիլինէ Պօղոսեան (հանգ.)
2 Ալաճալեան Յովակիմ Վրթանէսեան.
3 Աճէմեան Նիկողայոս Մկրտիչեան.
4 Աճէմեան Իսկուհի Պօղոսեան.
5 Աճէմեան Գուշխուհի.
6 Աւագեան Յակոբ Աւագեան (հանգ.)
7 Բարիլոյեան Աստուածատուր (հանգ.)
8 Բարիլոյեան Մարիամ (հանգ.)
9 Եթմիշեան Սրբուհի Գէորգեան.
10 Զարիֆեան Խաչատուր աւագ քհ.
11 Խազիգեան Յովակիմ Խաչատուրեան.
12 Ճափոշիքեան Գուշխուհի Միքայէլեան (հանգ.)
13 Ճըլթեան Տիրուհի.
14 Ոսկերչեան Սարգիս քահ.
15 Չայլախեան Յովհաննէս Միքայէլեան.
16 Պալապանեան Տիրուհի Յակոբեան (հանգ.)

17 Պիլիկեան Յովհաննէս Գրիգորեան.
18 Պօպոյեան Թագուհի Միքայէլեան (հանգ.)
19 Պօպովայ Մահտեսի Հեղինէ Գաբրիէլեան.
20 Տրապիզոնցեան Գաբրիէլ Միքայէլեան.
21 Քէօլլէ-Շահինեան Թադէոս Յովհաննէսեան
22 Քէօլլէ-Շահինեան Յովհաննէս Թադէոսեան.
23 Քիստեան Սարգիս Նիկողայոսեան.
24 Քիստեան Յակոբ Նիկողայոսեան (հանգ.)
25 Քուշնարեան Առաքել Թորոսեան (հանգ.)
26 Օպերեան Յակոբ Աղապապեան (հանգ.)

### Նախանձաւորք.

1 Աստուածատրեան Աբրահամ } Ագքերմանցիք
2 Աստուածատրեան Մարկոս }
3 Գրիգորեան Ստեփանոս, Թիֆլիզեցի.
4 Իզմիրեան Յովսէփ, Ղզլարեցի.
5 Թէմուրեան Յովհաննէս Աբրահամեան.
6 Խոճայնաթեան Յակոբ, Թիֆլիզեցի.
7 Կիրկիչեան Յովակիմ, Աստրախանցի.
8 Գալստեան Յովհաննէս, Պոթուշանցի.
9 Ղազիեան Յակոբ Գրիգորեան, Շուշեցի.
10 Նազարբէգեան Թովմաս.
11 Սանասարեան Մկրտիչ Սարգսեան.
12 Վարծիկուլեան Յովհաննէս Սողոմոնեան.



13 Տէր-Սիմէոնեան Մկրտիչ, Աստրախանցի.
14 Սէլիկեան, Բաքուեցի.
15 Օրբելեան Յակոբ, Շուշեցի.

### Տարեկան բաժանորդք.

1 Ագքերմանցեան Միքայէլ.
2 Ագգարեան Կարապետ Յովհաննէսեան.
3 Ագգարեան Յովհաննէս Յովսէփեան.
4 Ալաճալեան Ալեքսան Խաչերեսեան (հանգ).
5 Ալաճալեան Գրիգոր Մանուկեան.
6 Ալաճալեան Մարկոս Ալեքսանեան.
7 Ալաճալեան Մինաս Սիմէոնեան.
8 Ալճալեան Մկրտիչ Սիմէոնեան.
9 Ալաճալեան Յակոբ Մանուկեան.
10 Ալաճալեան Սիմէոն Խաչերեսեան.
11 Ալաճալեան Ղազարոս Յովհանեան (հանգ).
12 Ախչեան Վարդերես Ստեփանոսեան.
13 Աղափիրեան Գրիգոր Եպիսկոպոս.
14 Աճէմեան Յարութիւն Մկրտչեան
15 Աճէմեան Սերովբէ Յարութիւնեան
16 Այվազեան Մկրտիչ Աղապապեան.
17 Ասմայեան Մկրտիչ Աբգարեան.
18 Ասմայեան Յովհաննէս Միքայէլեան.
19 Արազեան Գալուստ Սիմէոնեան.

20 Արծաթպանեան Աբրահամ.
21 Աւագեան Միքայէլ Աւագեան.
22 Փափազեան Սարգիս.
23 Գանձապետեան Մարտիրոս քհ.
24 Թաշչիեան Պետրոս Սարգսեան.
25 Եազճեան Յարութիւն.
26 Երէցփոխեան Գէորգ Յովակիմեան.
27 Երէցփոխեան Մանուկ Յովակիմեան.
28 Երէցփոխ. Յակոբ Խաչատուրեան (հանգ).
29 Թամանեան Աղեքսանդր Ծերոնեան.
30 Թամանեան Խաչատուր Կարապետեան.
31 Թամանցեան Պօղոս Պետրոսեան (հանգ).
32 Թիթռեան Անդրէաս Կարապետեան.
33 Թիթռեան Խաչատուր Գէորգեան.
34 Թոխեան Մելքոն Գրիգորեան.
35 Թոփալեան Սերովբէ.
36 Խազիզեան Աւետիս Աստուածատրեան.
37 Խալիզեան Մկրտիչ Յովհաննիսեան.(հանգ.)
38 Խազեզեան Յովհաննէս Խաչերեսեան.
39 Խազիզեան Պետրոս Խաչատրեան.
40 Խազնատարեան Ստեփանոս.
41 Խաթրանեան Պօղոս Գէորգեան.
42 Խաչատուրեան Գաբրիէլ Ռափայէլեան.
43 Խաչկուռուզեան Բաղդասար Մկրտչեան.
44 Խասրէգեան Գէորգ.



45 Խասրէգեան Մանուկ Մերկեանեան.
46 Խարիբեան Գրիգոր Թորոսեան.
47 Խաֆաֆեան Ղազարոս Եղիեան.
48 Խըլըթճեան Մարկոս Յակոբեան
49 Խնծորեան Կարապետ Յովհաննիսեան.
50 Խնծորեան Յարութիւն Յովհաննիսեան.
51 Խուճեան Յովակիմ Գաբրիէլեան.
52 Խուճեան Սարգիս Կարապետեան.
53 Խօճայեան Գէորգ Գաբրիէլեան.
54 Խօճայեան Թովմաս Ղազարոսեան.
55 Խօճայեան Մարիամ Մարկոսեան.
56 Խօճայեան Յովակիմ Մարտիրոսեան.
57 Խօճայեան Նիկողայոս Մանուէլեան.
58 Խօճայեան Սարգիս Մարտիրոսեան.
59 Խօճայեան Սերովբէ Ղազարոսեան.
60 Ծառուկեան Գրիգոր Ծառուկեան.
61 Ծառուկեան Միքայէլ Յարութիւնեան.
62 Կարապետեան Միքայէլ Պօղոսեան.
63 Կարապետօղլուեան Գասպար Յարութիւն.
64 Կարապետօղլուեան Մարտիրոս Նազարէթ.
65 Կարապետօղլուեան Սերովբէ Յարութիւն
66 Կէնջօղլուեան Ստեփանոս Աստուածատրեան
67 Կօզպէթեան Կարապետ Մերկեանեան.
68 Կռուզինեան Եղիազար Կոդրատիոսեան.

69 Հալլաճեան Խաչատուր.
70 Հալլաճեան Մարիամ Գրիգորեան.
71 Հալլաճեան Մեսրոպ Պօղոսեան
72 Հալլաճեան Պետրոս Յակոբեան.
73 Հալլաճեան Սարգիս Քրիստոսատուրեան
74 Հայրապետեան Յարութիւն Կարապետեան
75 Ճարտարեան Յովհաննէս Կարապետեան.
76 Ճէվէլէկեան Կարապետ Ալեքսանեան.
77 Մաթոսեան Գէորգ Մանուէլեան.
78 Մահտեսեան Միքայել Գաբրիէլեան.
79 Մալով Գէորգ Յովակիմեան.
80 Մենիկեան Աստուածատուր Մանուկեան.
81 Մենիկեան Խաչերես Ստեփանոսեան.
82 Մենիկեան Կարապետ Աւետիսեան.
83 Միսսերեան Մարտիրոս Սարգսեան.
84 Միսսերեան Ղուկաս Լուսապարոնեան.
85 Միհանաճեան Մանուէլ Կիրակոսեան.
86 Միհանաճեան Քերովբէ Գէորգեան.
87 Մորթաճեան Կարապետ Գրիգորեան.
88 Մութաֆեան Կարապետ Պօղոսեան.
89 Յարութիւնեան Սերովբէ Խաչատրեան.
90 Յարութիւնեան Օգսէնտ Նիկողայոսեան.
91 Նալբանդեան Սերովբէ Ղազարոսեան (հանգ.)
92 Շափոշնիկեան Մինաս Գէորգեան.



93 Շափոշնիկեան Յովհաննէս Մարտիրոսեան.
94 Շափովալեան Նիկողայոս.
95 Շէքէրեան Մարտիրոս Յովհաննէսեան.
96 Շըլթեան Պօղոս Եզամեան.
97 Ոնոփեան Յակոբ.
98 Ունանեան Նաւմ Խաչատուրեան.
99 Չալխուշեան Խաչերես Խաչատուրեան.
100 Չախալեան Սարգիս Յովհաննէսեան.
101 Չախըրեան Կարապետ Յովհաննիսեան.
102 Չախըրեան Օգսէնտ Յակոբեան
103 Չայլախեան Խաչատուր Միքայէլեան.
104 Չառըխեան Միքայէլ Ստեփանոսեան.
105 Չափրաստեան Հեղինէ Յակոբեան.
106 Չոպաթառեան Գէորգ Պետրոսեան.
107 Չոպանեան Դաւիթ Յարութիւնեան.
108 Չոռնով Կարապետ Պօղոսեան.
109 Չոռնով Մանուկ Կարապետեան.
110 Չոռնով Միքայէլ Կարապետեան.
111 Չոռնով Մկրտիչ Կարապետեան.
112 Չոռնով Յակոբ Կարապետեան.
113 Չոռնով Նիկողայոս Կարապետեան.
114 Չուչոփեան Գաբրիէլ Ռափայէլեան (հանգ.)
115 Չուչոփեան Գէորգ Յակոբեան.
116 Չուչոփեան Կարապետ Քերովբեան.
117 Չուչոփեան Յակոբ Աստուածատրեան.

118 Զորայեան Պետրոս Ստեփանոսեան.
119 Զուկայեան Աստուածատուր Կարապետեան
120 Զուպառեան Խաչատուր Անտոնեան.
121 Զուպառեան Յովհան Գրիգորեան.
122 Զոլախեան Գէորգ Մելքոնեան.
123 Պալապանեան Աբրահամ Սիմէոնեան.
124 Պալապանեան Մինաս Եղիայեան.
125 Պալեան Աստուածատուր Բաղտասարեան.
126 Պալեան Բաղտասար Օգսէնտեան.
127 Պապասինեան Խաչատուր Գրիգորեան.
128 Պապասինեան Յովհաննէս Մկրտիչեան.
129 Պաղտիկեան Մարտիրոս Խաչատուրեան
130 Պարոնեան Գրիգոր Կարապետեան.
131 Պարոնեան Նազարէթ Ալեքսանեան.
132 Պլոտնիկեան Էմմանուէլ.
133 Պոպով Բարսեղ աւագ քհ.
134 Պոպոյեան Եպիփան Յակոբեան.
135 Պոպով Լուսապարոն Թադէոսեան.
136 Պոպով Լուսեղէն Միքայէլեան.
137 Պոպով Կարապետ Թորոսեան.
138 Պոպով Միքայէլ Գէորգեան.
139 Պոպով Միքայէլ Գաբրիէլեան.
140 Պոպով Յովակիմ Գութեան.
141 Պոպով Յովհաննէս Մարկոսեան.



142 Պոպով Սարգիս Գէորգեան.
143 Պոպով Ստեփանոս Մարտիրոսեան.
144 Պոպով Քերոմբէ Մեսրոբեան.
145 Քանթէմիրեան Աստուածատուր.
146 Քանթէմիրեան Յովհաննէս.
147 Ուէքիլեան Կարապետ.
148 Սալթիքեան Գասպար Բաղդասարեան.
149 Սալթիքեան Գասպար Լուսապարոնեան.
150 Սալթիքեան Յովհաննէս Լուսապարոնեան.
151 Սալթիքեան Պօղոս Գասպարեան.
152 Սալճիեան Պետրոս Կարապետեան.
153 Սախաձեան Կարապետ Մարտիրոսեան.
154 Սաէթեան Խաչատուր Սարգսեան.
155 Սարըյեան Նիկողայոս Աստուածատրեան.
156 Սերեբրակեան Կարապետ Յակոբեան.
157 Սերեբրակեան Յարութիւն Եղիայեան.
158 Ստեփանոսեան Խաչատուր Պօղոսեան.
159 Սրմաքէշեան Սիմէոն Մարտիրոսեան.
160 Սրմաքէշեան Ստեփանոս Մարտիրոսեան.
161 Սրմաքէշեան Վարդերես Մկրտիչեան.
162 Վատուժեան Յովակիմ Գրիգորեան.
163 Տէր-Աբրահամեան Յովհաննէս.
164 Տէր-Անդրէասեան Աստուածատուր.
165 Տէր-Կարապետեան Ստեփանոս.

166 Տրապիզոնցեան Ղազարոս Միքայէլեան.
167 Տրապիզոնցեան Մանուկ Միքայէլեան.
168 Տրապիզոնցեան Յովհաննէս Միքայէլեան.
169 Տրապիզոնցեան Սերովբէ Միքայէլեան.
170 Փիրալեան Անանիա քահանայ.
171 Քալմիքեան Յովակիմ Մինասեան.
172 Քահանիցքեն Կարապետ Սիմէօնեան.
173 Քահանիցքեն Գէորգ Սիմէօնեան.
174 Քայալեան Մկրտիչ Յովհաննիսեան.
175 Քայեալեան Յակոբ Յովհաննիսեան.
176 Քասթանայեան Մարտիրոս Մանուէլեան.
177 Քեօլլէեան Մինաս Միքայէլեան.
178 Քեօռօղլուեան Գէորգ Մանուկեան.
179 Քիստեան Նիկողայոս Յակոբեան.
180 Քիրիշչիեան Խաչերես.
181 Քէչէճիեան Պետրոս Խաչատուրեան.
182 Քուշնարեան Յովհաննէս Թորոսեան.
183 Քաւօթքեան Պօղոս Յարութիւնեան.
184 Օպնեան Աստուածատուր Եղապարեան.
185 Օպնեան Գրիգոր Յակոբեան.

ՊԵՏ ԱՆՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0049682
16680

С арм-и / 5995